ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 27

«01» 07 2019թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 45 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2014 թվականի հուլիսի 14-ի N 56 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 45 հրամանով սահմանված վիճակագրական հաշվետվությունների ձևերը լրացնելու և ներկայացնելու գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2014 թվականի հուլիսի 14-ի N 56 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 45 հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) 1-ին կետում, 3-րդ կետում, 7-րդ կետի 14-րդ ենթակետում, 19-րդ կետում, 480-րդ կետի 4-րդ ենթակետում «դատախազության աշխատակազմ» բառերը և համապատասխան հոլովաձևերը փոխարինել «դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

2) 4-րդ կետում «13 բաժնից» բառերը փոխարինել «14 բաժնից» բառերով, իսկ «13-րդը՝ 2 աղյուսակից» բառերից հետո ավելացնել «14-րդը՝ 1 աղյուսակից» բառերը,

3) 5-րդ կետը լրացնել նոր 14-րդ ենթակետով. «14) Բաժին 14. Ազդարարման համակարգի միջոցով վարվող վիճակագրական հաշվառման մասին:»,

4) 6-րդ կետում «ՀՀ դատախազության աշխատակազմի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային ստորաբաժանումների» բառերը փոխարինել «ՀՀ դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների» բառերով,

5) 14-րդ կետի «աշխատակազմ» բառը հանել,

6) 15-րդ կետում, 19-րդ կետում «աշխատակազմի ղեկավար» բառերը և համապատասխան հոլովաձևերը փոխարինել «գլխավոր քարտուղար» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

7) 19-րդ կետում «աշխատակազմի հանրային կապերի» բառերը փոխարինել «հանրային կապերի» բառերով, իսկ «դատախազության աշխատակազմի միասնական» բառերը փոխարինել «դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների միասնական» բառերով,

8) ուժը կորցրած ճանաչել 238-րդ կետի 8-րդ ենթակետը,

9) 403-րդ կետում «1-67» թվերը փոխարինել «1-71» թվերով,

10) 404-րդ կետում «68» թիվը «փոխարինել «72» թվով, իսկ «1-67» թվերը՝ «1-71» թվերով,

11) 407-րդ կետում, 408-րդ կետում, 409-րդ կետում, 410-րդ կետում, 411-րդ կետում, 412-րդ կետում, 413-րդ կետում, 414-րդ կետում «68» թիվը փոխարինել «72» թվով,

12) 421-րդ կետում «1-68» թվերը փոխարինել «1-72» թվերով,

13) 456-րդ կետում «68» թիվը փոխարինել «72» թվով,

14) 480-րդ կետում «14-17» թվերը փոխարինել «14-18» թվերով,

15) 480-րդ կետը լրացնել նոր 2.1-րդ ենթակետով. «2.1) ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազների մոտ (16-րդ սյունակ)»,

16) 480-րդ կետի 3-րդ ենթակետի «16» թիվը փոխարինել «17» թվով,

17) 480-րդ կետի 4-րդ ենթակետի «17» թիվը փոխարինել «18» թվով,

18) 481-րդ կետում «14-17» թվերը փոխարինել «14-18» թվերով,

19) 482-րդ կետում «19-27» թվերը փոխարինել «20-28» թվերով,

20) 482-րդ կետի 1-ին ենթակետի «19» թիվը փոխարինել «20» թվով,

21) 482-րդ կետի 2-րդ ենթակետի «20» թիվը փոխարինել «21» թվով,

22) 482-րդ կետի 3-րդ ենթակետի «21» թիվը փոխարինել «22» թվով,

23) 482-րդ կետի 4-րդ ենթակետի «22» թիվը փոխարինել «23» թվով,

24) 482-րդ կետի 5-րդ ենթակետի «23» թիվը փոխարինել «24» թվով,

25) 482-րդ կետի 6-րդ ենթակետի «24» թիվը փոխարինել «25» թվով,

26) 482-րդ կետի 7-րդ ենթակետի «25» թիվը փոխարինել «26» թվով,

27) 482-րդ կետի 8-րդ ենթակետի «26» թիվը փոխարինել «27» թվով,

28) 482-րդ կետի 9-րդ ենթակետի «27» թիվը փոխարինել «28» թվով,

29) 483-րդ կետում «19-27» թվերը փոխարինել «20-28» թվերով, իսկ «18» թիվը՝ «19» թվով,

30) 478-րդ կետում «աշխատակազմի» բառը փոխարինել «աջակցող մասնագիտական» բառերով,

31) 480-րդ կետի 4-րդ ենթակետում «աշխատակազմում» բառը փոխարինել «աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումում» բառերով,

32) 501-րդ կետում «աշխատակազմի» բառերը հանել,

33) հավելվածը լրացնել նոր 73.1 բաժնով.

«73.1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ 14-ՐԴ ԲԱԺՆԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

545.1. Հաշվետվության 14-րդ բաժինը («Ազդարարման համակարգի միջոցով վարվող վիճակագրական հաշվառում») արտացոլում է ազդարարման համակարգի միջոցով ստացված տվյալների արդյունքները, որը լրացվում է ՀՀ գլխավոր դատախազությունում ազդարարման համակարգը համակարգող ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի կողմից»:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.Դավթյան